Պատասխաններ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2025-2026 ուս. տարի
11-12 դասարան

1. ա-ճիշտ; բ-սխալ; գ-սխալ; դ-ճիշտ; ե-սխալ; զ-ճիշտ; է-ճիշտ; ը-ճիշտ (յուր՝ **0.25միավոր**)

2. Պարագվայ **(1միավոր)**

3. գ. **(1միավոր)**

4. Գծագրում ուշադրություն դարձնել ուղղահայաց և հորիզոնական մասշտաբների ճիշտ արտահայտմանը, կետերի մակնշմանը և կտրվածքի ճշգրտությանը: Յուրաքանչյուր անհամապատասխանության կամ տարրի բացակայության համար **նվազեցնել 0.25միավոր**: Գծագիրը պետք է ունենա նմանատիպ տեսք՝



ա. 240մ **(0.5միավոր)**:

բ. 40մ (**0.5միավոր**):

գ. Թեքությունը = Անկում/Երկարություն = 200մ/200մ=**1 (1միավոր):**

5. ա. 20000000մարդ x 0,1%/100% = 20000 մարդ

20000+30000=50000 մարդ հավելաճ **(0.25միավոր)**:

50000մարդ*3000կՎտ-ժամ=150000000կվտ-ժամ հավելյալ էլեկտրաէներգիայի պահանջ **(ևս 0.25միավոր)**

150000000/2000=75000 տոննա պայմանական վառելիք **(ևս 0.25միավոր)**

Զուտ հաշվարկային-տեխնիկական սխալի դեպքում շնորհել առավելագույնը **0.5միավոր**: Ցանկացած բովանդակային սխալի դեպքում միավոր չի տրվում:

բ. 90-40+25=75 (**1միավոր**)

Եթե աշակերտը չգիտի Երևանը որ աշխարհագրական լայնության վրա է, **0միավոր**: Թվերը ճիշտ գրելու, սակայն հաշվարկում վրիպակի համար՝ **0.75միավոր**:

6. ա. Էկվադոր, Ինդոնեզիա, Քաթար, Անգոլա: Ընդունել նաև Գաբոն տարբերակը

բ. Մարտի 17, մարտի 25, սեպտեմբերի 19, սեպտեմբերի 27

Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ նշված պատասխանի դեպքում միավորը նվազեցնել **0.25**-ով:

7. Սուդան, Աֆղանստան, Սիրիա, Վենեսուելա: Յուրաքանչյուր դիրքում ճիշտ պատասխանը նշելու պարագայում՝ **0.25միավոր:**

8. ա. Էլեկտրոնային աղբը շարունակում է մնալ գրավիչ, քանի որ պարունակում է ոսկի և բազմաթիվ հազվագյուտ մետաղներ, որոնց կորզումը ապահովում է աշխատատեղեր և եկամուտ **(0.5միավոր)**, ինչպես նաև նպաստում է տեղական արտադրությունների գների նվազմանը և

մրցունակության բարձրացմանը **(0.5միավոր)**: Թերի ձևակերպումների համար լիարժեք միավոր չի տրվում:

բ. Գլխավոր պատճառը անցումն է այլընտրանքային էներգետիկայի, որի տեսակներից է կենսավառելիքի արտադրությունը: Եգիպտացորենի ցանքատարածությունների ընդարձակումն ու բերքի մի զգալի մասը ներկայումս ծառայում են հենց կենսավառելիքի արտադրությանը **(1միավոր)**:

9. ա. Սյունաձև տրամագիրը պետք է ունենա հետևյալ տեսքը (**0.5միավոր**): Այլ բնույթի տրամագիր ներկայացնելու կամ լիարժեք չմակնշելու դեպքում՝ ոչ ավել քան **0.25միավոր:**



2020-2025թթ. ժամանակահատվածում հարաբերական աճը կազմել է մոտ 610% կամ 6,1 անգամ (**0.5միավոր**):

բ. Նման աճը պայմանավորված է հայկական շուկա մի քանի լոուքոսթերների մուտքով, ինչի արդյունքում ուղևորափոխադրումների գները զգալիորեն նվազեցին: Բացի այդ, նշված ժամանակահատվածում մի շարք երկրների հետ պարզեցվեց վիզային ռեժիմը, որը ևս նպաստեց ուղևորափոխադրումների թվի աճին: Որպես պատճառներ կարելի է նշել նաև զբոսաշրջության առաջընթացը և բնակչության եկամուտների աճը **(1միավոր)**:

10. ա. Շրջանաձև տնտեսությունը տնտեսական մոդել է, որը ձգտում է երկարացնել ապրանքների կյանքը և նվազեցնել արտադրության բնապահպանական ազդեցությունները **(0.5միավոր)**: Ի տարբերություն գծային մոդելի, որում գերակշռում է վերցնել-մշակել-սպառել-դեն նետել սկզբունքը, շրջանաձև տնտեսությունը խրախուսում է նյութերի վերամշակումը, բազմակի օգտագործումը, անթափոն արտադրությունը, վերականգնվող ռեսուրսների և այլ կայուն ձևերի կիրառումը **(0.5միավոր)**: Շրջանաձև տնտեսությունը միտված է կայուն զարգացման հայեցակարգի իրագործմանը **(0.5միավոր)**: Այն հիմնականում ներդրվում է զարգացած երկրներում, քանի որ նման տրանսֆորմացիան պահանջում է ինչպես տեխնոլոգիաների ներդրում, այնպես էլ մտածելակերպի ու գործելաոճի փոփոխություն, որը կրթական ցածր ցենզ, օրենսդրական բազմաթիվ բացեր ու ֆինանսական խնդիրներ ունեցող երկրներին դժվար է իրականացնել **(0.5միավոր)**:

11. Ա- 2; Բ- 4; Գ- 1; Դ- 3 (**յուր. 0.5 միավոր**)